Մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Վարդանաշենի Մ. Մինասյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հասարակագիտություն (10 դասաժամ), ՀԵՊ (5 դասաժամ), աշխարհագրություն (10 դասաժամ), երաժշտություն (8 դասաժամ), կերպարվեստ (8 դասաժամ), տեխնոլոգիա (4 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է 2 փուլով ՝թեստավորման և հարցազրույցի :Թեստավորման փուլն անցկացվում է՝ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում (Ձև 1),

-մեկ լուսանկար՝ 3x4 չափի ,

-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)

-անձը հաստատող փաստաթուղթ

-«Հանրակրթության մասին» ՀՀօրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին

համապատասխան՝աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և

աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)

-ինքնակենսագրություն (Ձև 5)

-այլ պետության քաղաքացիները ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փատաթուղթ,

-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ ,

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր

(առկայության դեպքում)

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում ՝հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենի հետ և բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք :

Փաստաթղթերի ընդունումը 09.01.2024-20.01.2024 -ը:
Մրցույթը կայանալու է 24.01.2024 -ին:

Արմավիրի մարզի Վարդանաշենի Մ.Մինասյանի անվան միջնակարգ դպրոցում , հասցեն գ.Վարդանաշեն, 1-ին փ.24 շ.: Տեղեկությունների համար զանգահարել ՝ (093) 31-03-68 հեռախոսահամարով: